COP29-ում Ադրբեջանի հիմնական խնդիրների մասին

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 22.11.2024 թ.[1]

2024 թ. նոյեմբերի 11-ին Ադրբեջանի մայրաքաղաքում մեկնարկել է ՄԱԿ-ի կլիմայական համաժողովը՝ COP29: Բաքուն ՄԱԿ-ի համապատասխան կառույցների հետ լրջորեն պատրաստվում էր այս իրադարձությանը՝ ջանք չխնայելով, որպեսզի COP29-ի մասշտաբներն ու նշանակությունը չզիջեն Փարիզում 2015 թ. տեղի ունեցած հիշարժան բնապահպանական համաժողովին: Կլիմայի միջազգային գագաթնաժողով անցկացնելու հարցում ԱդրՀ-ի ծայրահեղ շահագրգռվածության մասին է վկայում այն փաստը, որ Բաքուն ժամանակին Երևանից ստացել է COP29-ի կազմակերպման իրավունքը զիջելու համաձայնությունը՝ մի քանի տասնյակ հայ ռազմագերիների ազատ արձակման դիմաց:

COP29-ի պաշտոնական կայքի համաձայն՝ համաժողովը պետք է դառնա նախաձեռնող և *«ապահովի կոնկրետ արդյունքների ձեռքբերում, որպեսզի կյանքի կոչի ԱՄԷ-ի անցյալ տարվա պատմական կոնսենսուսում արձանագրված խոստումները՝ կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունից յուրաքանչյուր երկրի և գլոբալ տնտեսության պաշտպանության համար»*[2]: Օրակարգում ՄԱԿ-ի հովանու ներքո միջազգային հիմնադրամի ստեղծումն է, որի ֆինանսական միջոցները պետք է բաշխվեն երկրների միջև՝ կլիմայի գլոբալ փոփոխության դեմ պայքարելու համար: Նախատեսվում է, որ հիմնադրամի միջոցները կկազմեն տարեկան առնվազն 1 տրիլիոն ԱՄՆ դոլար, իսկ դրա հիմնական դոնորները պետք է լինեն զարգացած երկրները, ինչպես նաև այն պետությունները, որոնք ապահովում են իրենց աճող բարեկեցությունը հանածո բնական պաշարների և արտադրող արդյունաբերության հաշվին, որը կապված է շրջակա միջավայրի աղտոտման բարձր ռիսկի հետ[3]: *«Կլիմայական»* կամ *«բնապահպանական»* հիմնադրամը նախատեսվում է օգտագործել բնական էկոլոգիական հավասարակշռությունը վերականգնելու, տնտեսության արդյունաբերական ոլորտներում «*կանաչ տեխնոլոգիաներ*» ներմուծելու և ամբողջ աշխարհում վերականգնվող էներգիայի աղբյուրների հսկայածավալ միավորում (կլաստեր) ստեղծելու համար:

Դեռևս մինչև վաղ աշուն համարվում էր, որ խորհրդաժողովն ունի բոլոր հնարավորությունները հիմնադրամի վերաբերյալ պայմանավորվածություններ ձեռք բերելու համար՝ դրանով իսկ Բաքվի միջոցառումը վերածելով դարակազմիկ նշանակության իրադարձության: Սակայն, երբ մոտենում էր համաժողովի բացման

---

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 19.11.2024 թ.:

[2] «ՄԱԿ-ի կլիմայի կոնֆերանսը Բաքվում. նոյեմբեր 2024» (ռուս.). UNFCCC (10.11.2024), https://unfccc.int/ru/ cop29\ (բեռնման օրը՝ 12.11.2024):

[3] «COP 29-ի մասնակիցները քննարկում են կլիմայի պաշտպանության ֆինանսավորումը»՝ DW (11.11.2024), https://www.dw.com/ ru/ucastniki-cop29-v-baku-obsuzdaut-finansirovanie-zasity-klimata/a-70750925\ (բեռնման օրը՝ 12.11.2024):

ժամկետը, հայտնի դարձավ, որ աշխարհի ամենաազդեցիկ առաջնորդները մեկը մյուսի հետևից հրաժարվում են մասնակցել գագաթնաժողովին: Սա պատճառ դարձավ, որ միջազգային հեղինակավոր լրատվամիջոցները թերահավատորեն վերաբերվեն ինչպես Բաքվի խորհրդաժողովին, այնպես էլ համաշխարհային *«բնապահպանական»* հիմնադրամ ստեղծելու հնարավորություններին՝ թեկուզ հայտարարված մասշտաբով[4]:

Ադրբեջանի կողմից ՄԱԿ-ի կլիմայական խորհրդաժողովը հյուրընկալելու դրդապատճառների վերաբերյալ նշենք, որ Ի. Ալիևին անհրաժեշտ է լայնամասշտաբ միջոցառման կազմակերպում շուրջ 100 երկրների ներկայացուցիչներով (40-ից մինչև 70 հազար մասնակից), որպեսզի «օրինականացվեն» հայերի էթնիկ զտումները Լեռնային Ղարաբաղում և վերականգնվի իր հեղինակությունը, ինչի մասին արդեն գրել են միջազգային լրատվամիջոցները: Սա, ըստ երևույթին, նույնպես որոշակի դեր է խաղացել Ադրբեջանի ղեկավարի ծրագրերում, ինչպես նաև նրա ցանկությունը միջազգային հանրությանն ու ներքին լսարանին ցույց տալու, որ Ադրբեջանն իր ղեկավարության օրոք կերտել է «*հաջողակ*» և «*դինամիկ զարգացող երկրի*» կերպար: Բայց զուտ քարոզչական դրդապատճառներից բացի, Ալիևի ռեժիմը կարող է ծրագրեր ունենալ իր նպատակին հասնելու համար կլիմայական միջազգային հարթակն օգտագործելու իր ուղիղ նշանակմամբ՝ աջակցելու Ադրբեջանի նավթից կախված տնտեսությանը և փրկելու երկրի բնապահպանական բարդ իրավիճակը: Բաքվի համար այս շարժառիթները կարող են ոչ պակաս արժեքավոր լինել, քան քաղաքական և իմիջային դիվիդենտներ ստանալը լայնածավալ միջոցառումից:

Փաստն այն է, որ Ադրբեջանի տնտեսությունը, չնայած իշխանությունների կողմից այն դիվերսիֆիկացնելու մշտական խոստումներին, մնում է կախված նավթագազային հատվածից և, հետևաբար, ածխաջրածինների համաշխարհային գների տատանումներից: Թեև Ադրբեջանի տնտեսության դինամիկ դիվերսիֆիկացման ծրագիրը հայտարարվել է Ադրբեջանի կառավարության գերակայություն, իրականում այս ոլորտում շոշափելի առաջընթաց չի գրանցվել: Նավթի և գազի արտահանումից ստացված եկամուտները շարունակում են մնալ ԱդրՀ ազգային եկամտի հիմքը՝ նույնիսկ հաշվի առնելով վերջին տարիներին նավթի արդյունահանման անկումը: Ելնելով Ադրբեջանի տնտեսության կառուցվածքի առանձնահատկություններից, հումքի արտադրության անկումը, իր հերթին, դանդաղեցնում է տնտեսության ոչ նավթային հատվածների զարգացումը, որոնք սերտորեն փոխկապակցված են դրա հետ: Եվ, հետևաբար, մղվող նավթի ծավալները կայունացնելու ակնկալիքով, Բաքուն ադրբեջանական հորեր շահագործող միջազգային ընկերություններին մղում է դեպի ցածր

[4] «Ժամանակի վատնում». համաշխարհային առաջնորդները հրաժարվում են մասնակցել Բաքվում կայանալիք COP29-ին» (ռուս.). Euronews (09.11.2024), https://ru.euronews.com/green/2024/11/09/cop29-world-leaders-refuse-. to-take-part-we-explain-why\ (բեռնման օրը՝ 11.11.2024):

շահութաբերություն ունեցող նավթահորերի գործարկում և նոր հանքավայրերի ուսումնասիրություն: Սա իր հերթին ավելի է սրում Կասպից ծովի առափնյա ծանծաղուտում առանց այն էլ բարդ բնապահպանական իրավիճակը, որը երկրների բնապահպանական արդյունավետության ցուցանիշներում Ադրբեջանին մղեց դեպի տարածաշրջանից դուրս գտնվող երկրների (outsider) շարք[5]: Բնապահպանական ցածր վարկանիշն, իր հերթին, չի կարող չազդել ադրբեջանական նավթագազային ապագա ծրագրերի գրավչության և հեռանկարների վրա: Այսպիսով, ուրվագծվում է մի արատավոր շրջանակ, որից ելքը շատ բարդ է թվում՝ հաշվի առնելով տեղական մտածելակերպը և երկրում տնտեսական կառավարման գործելաոճը:

Ադրբեջանի իշխանությունները չեն կարող չտեսնել, որ նավթային կախվածությունը խոչընդոտում է երկրի զարգացմանը, և համակարգի ծայրահեղ բյուրոկրատացումը թույլ չի տալիս կրկնել Ինդոնեզիայի, Մալազիայի և ԱՄԷ-ի հաջողված փորձը, որոնք համեմատաբար արագ դիվերսիֆիկացրեցին իրենց տնտեսությունները՝ տեղաբաշխելով նավթի արդյունահանումը ոչ թե իրենց զարգացման առաջնագծում, այլ միայն դրա կայուն զարգացումն ապահովող արդյունաբերության դիրքում: Արդյունքում՝ Ադրբեջանը հետ է մնում վերը նշված զարգացող և զարգացած (Նորվեգիա, Սինգապուր) նավթարդյունահանող տնտեսությունների վերակազմավորման դինամիկայից և գտնվում է աֆրիկյան երկրների (Նիգերիա, Գաբոն և այլն) մակարդակի վրա: Թեև անգամ հումք արտահանող աֆրիկյան երկրների շարքում կան այնպիսիները, որոնք շոշափելի հաջողությունների են հասել նավթային և գազային կախվածությունից ազատվելու հարցում (օրինակ՝ Ալժիրը):

Բնական է, որ այս բոլոր երկրներում բնապահպանական իրավիճակը ուղիղ համեմատական է նավթագազային հատվածից դրանց կախվածության աստիճանին, ինչի մասին են վկայում միջազգային աղբյուրները: Ըստ այդմ, Ադրբեջանի բնության անմխիթար վիճակը ուղղակիորեն կապված է տնտեսության իրավիճակի հետ, որը հիմնված է *վերջին 30 տարվա ընթացքում այս երկրին ծանոթ «արտամղում–վաճառում–մուտքագրում բյուջե» գծապատկերի վրա:* Եվ, այնուամենայնիվ, պաշտոնական Բաքուն չի ցանկանում ճանաչել, առավել ևս՝ աշխարհին ցույց տալ իր հետընթաց տնտեսական մոդելի և երկրի բնապահպանական բարդ իրավիճակի անմիջական կապը: 2024 թ. նոյեմբերի 13-ին COP29-ի շրջանակներում *«Երիտասարդությունը կլիմայի փոփոխության դեմ պայքարի առաջնագծում»* խորհրդաժողովում ԱդրՀ փոխնախագահ Մեհրիբան Ալիևան հայտարարել էր, որ Ադրբեջանին բաժին է ընկնում ջերմոցային գազերի համաշխարհային արտանետումների միայն 0,1%-ը, որը, ենթադրաբար, գլոբալ կլիմայի վատթարացման վրա Ադրբեջանի հանքային արդյունաբերության կործանարար

[5] «Երկրների վարկանիշն ըստ բնապահպանական մակարդակի»՝ https://nonews.co/directory/lists/countries/ecology\ (բեռնման օրը՝ 12.11.2024):

ազդեցության չափազանց ցածր ցուցանիշ է[6]: Միաժամանակ նա ընդգծել է, որ Ադրբեջանը մեծ խնդիրների է բախվում գետերի և Կասպից ծովի արագ ծանծաղացման պատճառով, սակայն նախընտրել է այդ հարցը չկապել երկրի հումքի ոչ ռացիոնալ շահագործման հետ՝ հին, էկոլոգիապես նվազագույն մաքրությամբ տեխնոլոգիական մեթոդներով:

Հատկանշական է, որ ադրբեջանցի մասնագետների վերջին ուսումնասիրությունների արդյունքներով պարզվել է, որ, իբր, Կասպից ծովի ծանծաղացման վրա հիմնականում ազդում է տարածաշրջանում ջերմաստիճանի ընդհանուր աճը՝ նպաստելով ծովի ջրի ինտենսիվ գոլորշիացմանը, Կենտրոնական Ասիայի անապատներում՝ Կասպից ծովի ջրերը չորացնող լայնածավալ քամու հոսքերի ձևավորումը, ինչպես նաև Վոլգա գետից Կասպից ծով մտնող ջրի ծավալների կրճատումը: Այդ ծովի էկոլոգիայի վրա նավթի և գազի արդյունահանման հնարավոր ազդեցության գործոնը մոտալուտ աղետի պատճառների թվում չի հիշատակվում: Ակնհայտ է, որ Ադրբեջանում (նաև Ղազախստանում և Թուրքմենստանում) պաշտոնական մակարդակով ընդունված չէ բնապահպանական խնդիրները կապել նավթարդյունաբերության հետ: Բաքվի փորձագետները հակված են կարծելու, որ ծովում ջրի մակարդակի նվազմանը նպաստող միակ մարդածին գործոնը *«ջրամբարների և այլ ջրաբաշխական օբյեկտների կառուցումն է ծովը սնուցող գետերի վրա, որոնք թույլ չեն տալիս ջրի հոսքը դեպի Կասպից ծով»*[7]: Հասկանալի է, որ խոսքը ՌԴ-ի մասին է, որի քաղաքականությունը Վոլգայից ջրառի հարցում դուր չի գալիս ԱդրՀ-ին և մերձկասպյան թյուրքական մյուս երկրներին, որոնք հակված չեն նավթաբեր կասպյան առափնյա ծանծաղուտի անխնա շահագործումը համարել ջրամբարի էկոլոգիայի վատթարացման հիմնական պատճառը:

Դեռևս Մոսկվա կատարած ապրիլյան այցի ընթացքում, այնուհետև Վ. Պուտինի՝ Բաքու կատարած օգոստոսյան այցի ժամանակ, Ի. Ալիևը ՌԴ նախագահի առջև բարձրացրել է Վոլգա գետից Կասպից ծով մտնող ջրային պաշարների կրճատման հարցը՝ խնդրելով կարգավորել խնդիրը: Վ. Պուտինը հանձնարարել է ՌԴ մերձվոլգյան շրջանների ղեկավարներին խնդրի վերաբերյալ մանրամասն զեկույցներ և առաջարկներ պատրաստել: 2024 թ. հոկտեմբերի սկզբին ռուսական կողմի նախաձեռնությամբ ստեղծվել է ռուս և ադրբեջանցի գիտնականների համատեղ աշխատանքային խումբ, որի նպատակն էր ուսումնասիրել Կասպից ծովի ծանծաղացման խնդիրները: Սակայն, ինչպես կարելի է դատել ռուսական լրատվամիջոցներից, ՌԴ փորձագետներն արդեն հակված են կարծելու, որ կասպիական էկոլոգիական հավասարակշռության խախտման

[6] «Մեհրիբան Ալիևան պաշտպանում է հարձակումները» (ռուս.). Haqqin.az (13.11.2024), https://haqqin.az/news/332739\ (բեռնման օրը՝ 13.11.2024):

[7] «Կասպից ծովի ծանծաղացման խնդիրը. հայացք Ադրբեջանից» (ռուս.). Каспийский вестник (07.11.2024), https://casp-geo.ru/problema-obmeleniya-kaspiya-vzglyad-iz-azerbajdzhana/ (բեռնման օրը՝ 13.11.2024):

հիմնական պատճառներից մեկը մերձկասպյան երկրների կողմից տնտեսության ոչ ճիշտ կառավարումն է և բնական ռեսուրսների շահագործման ագրեսիվ մեթոդները[8]. «*Մերձկասպյան երկրների գերատեսչություններն ու մարմինները կենսառեսուրսների, զբոսաշրջության և հանգստյան գոտիների ռացիոնալ օգտագործման փոխարեն ավելի շատ զարգացնում են արդյունաբերության արդյունահանող և գյուղատնտեսական ճյուղերը*»:

Կասպից ծովի ծանծաղացումը ԱդրՀ-ի միակ բնապահպանական խնդիրը չէ, որը պայմանավորված է այս երկրում կառավարման մեթոդներով: ԱՌՎԱԿ կենտրոնն արդեն անդրադարձել է այն թեմային, թե ինչպես է Ադրբեջանի լեռնահանքային արդյունաբերությունն ազդում այս երկրի էկոլոգիական հավասարակշռության խախտման վրա, աղտոտում բնական միջավայրը և հանգեցնում Ադրբեջանի քաղաքացիների մահվան ու ծանր հիվանդությունների: Օգտվելով հանրապետության ոսկու հանքերում բաժնետոմսեր և վիճելի համբավ ունեցող բրիտանա-ամերիկյան ընկերությունների կապերից և աջակցությունից, Բաքուն խուսափում է շրջակա միջավայրին հասցված վնասի պատասխանատվությունից և չի ցանկանում լեռնահանքային արդյունաբերություն ներմուծել էկոլոգիապես մաքուր, բայց թանկարժեք տեխնոլոգիաներ: Նման իրավիճակ է նաև նավթարդյունահանման ոլորտում, որը Բաքուն ոչ միայն մտադիր չէ վերակազմավորել իր տնտեսության բարդ կառուցվածքում, այլև չի ձգտում վերափոխել *«կանաչ»* նոր տեխնոլոգիաներով:

COP29 համաժողովի բացման ժամանակ իր ողջույնի խոսքում Ի. Ալիևը հայտարարեց, որ իրեն անխնա քննադատում են *«Նավթն ու գազը Աստծո պարգև են»* ձևակերպման հեղինակ լինելու համար: Նա հաստատեց, որ մնում է այդ կարծիքին՝ Ադրբեջանին հանքանյութերի շահագործման միջոցով շրջակա միջավայրն աղտոտելու մեջ մեղադրելու փորձերն անվանելով *«երեսպաշտական»: «Նավթն ու գազը Աստծո պարգև են, ինչպես արևը, քամին և հանքանյութերը: Յուրաքանչյուր բնական ռեսուրս, լինի դա նավթ, գազ, քամի, արև, ոսկի, արծաթ, պղինձ - բոլորը բնական ռեսուրսներ են: Երկրներին չպետք է մեղադրել դրանց առկայության համար, և նրանց չպետք է մեղադրել այդ ռեսուրսները շուկա հանելու համար»*[9]: Միևնույն ժամանակ, Ադրբեջանի նախագահը վստահեցրել է, որ ինքը *«կանաչ էներգետիկայի»* անցնելու համոզված կողմնակիցն է, ի ապացույց որի հաջորդ օրը Ղազախստանի և Ուզբեկստանի հետ ստորագրել է համաձայնագիր՝ *«կանաչ էներգիայի զարգացման և փոխանցման ոլորտում գործընկերության մասին»:* Խոսքը Կասպից ծովի հատակով, այսպես կոչված, *«կանաչ*

[8] «Մոսկվան և Բաքուն համատեղ կանդրադառնան Կասպից ծովի ծանծաղացման խնդրին», РИТМ ЕВРАЗИИ (07.11.2024), https://www.ritmeurasia.ru/news--2024-11-06--moskva-i-baku-sovmestno-zajmutsja-problemoj-obmelenija-kaspijskogo-morja-76658 \ (բեռնման օրը՝ 13.11.2024):

[9] «COP29. Ալիևը Բաքվի հասցեին արևմտյան քննադատությունն անվանել է «երեսպաշտական». Ազատություն ռադիոկայանը (12.11.2024), https://www.svoboda.org/a/cop29-aliev-nazval-litsemernoy-kritiku-v-adres -baku. -so-storony-zapada-/33199761.html\ (բեռնման օրը՝ 13.11.2024):

մալուխ» անցկացնելու նախագծի մասին է, որն ապագայում պետք է միանա մեկ այլ մալուխի, որն էլ Սև ծովի հատակով տանում է Ադրբեջանից և Վրաստանից դեպի Եվրոպա (որին ժամանակին անդրադարձել է ԱՌՎԱԿ կենտրոնը), դրանով իսկ Հին աշխարհին ապահովելով վերականգնվող էներգիայի աղբյուրներով Հարավային Կովկասից և Կենտրոնական Ասիայից[10]: Ուզբեկստան–Ղազախստան–Կասպից ծով–Ադրբեջան հատվածի շինարարության ծախսերը հոգացել է սաուդյան *ACWA Power* ընկերությունը:

Հատկանշական է, որ COP29-ի բացման ժամանակ իր ելույթում Իլհամ Ալիևը խեղաթյուրել է փաստերը. իրականում ոչ ոք Ադրբեջանին երբևէ չի մեղադրել նավթի և գազի պաշարների տիրապետելու և դրանք վաճառելու մեջ: Եթե Բաքուն քննադատության է ենթարկվել և շարունակում է քննադատվել միջազգային հարթակներում, ապա միայն այն պատճառով, որ այնտեղ ածխաջրածինների արտադրությունն իրականացվում է բնական ռեսուրսների շահագործման միջազգային բնապահպանական չափանիշների խախտմամբ: Եվ նաև այն բանի համար, որ ԱդրՀ նավթի վաճառքից ստացված եկամուտներն օգտագործվել են երկիրը ռազմականացնելու, պատերազմներ և էթնիկ զտումներ սանձազերծելու, առանձին քաղաքական գործիչների և ամբողջ կառավարությունների կաշառելու և երկրի ու ժողովրդի կառավարման ավտորիտար մեթոդներ պարտադրելու համար: Սակայն Ի. Ալիևի համար կարևոր է նախևառաջ ցույց տալ ադրբեջանական հասարակությանը, որ մեղադրվում է ոչ թե անձամբ ինքը և նրա կառուցած ռեժիմը, այլ՝ ամբողջ երկիրը:

Ամփոփելով COP29-ի օրակարգի բաց տվյալների վերանայումը, ինչպես նաև վերլուծելով ադրբեջանական իշխանությունների հռետորաբանությունը և համակողմանի աշխատանքը, որը նրանք իրականացնում են խորհրդաժողովի շրջանակներում, կարող ենք եզրակացնել, որ Բաքուն միաժամանակ աշխատում է երկու ուղղությամբ: Ադրբեջանը մի կողմից հասկացնում է, որ չի պատրաստվում հրաժարվել նավթի և գազի հանքավայրերի շահագործման ներկայիս քաղաքականությունից և փոխել իր տնտեսության կառուցվածքը: Մյուս կողմից, այն միաժամանակ փորձում է օգտվել միջազգային հիմնադրամներից ու միջոցներից, որոնք ուղղված են բնության հավասարակշռության վերականգնմանը և վերականգնվող էներգիայի աղբյուրների (ՎԷԱ) ոլորտում լայնածավալ նախագծերի իրականացմանը: Այս երկու նպատակներն արդյունավետորեն համատեղելու համար Բաքուն պետք է վարի իր՝ քայքայիչ նավթարդյունահանման և բնապահպանական ոլորտում աղետալի իրավիճակի միջև անմիջական կապը ժխտելու քաղաքականություն:

Ածխաջրածինների համաշխարհային գների անկայունությունը, որը պարբերաբար պատուհասում է հանածո էներգետիկ ռեսուրսների միջազգային շուկան, մի շարք

[10] «Բաքուն, Աստանան, Տաշքենդը և Էր-Ռիադը ստորագրել են կարևոր փաստաթուղթ». Haqqin.az (13.11.2024), https://haqqin.az/news/332756\ (բեռնման օրը՝ 13.11.2024):

միջազգային փորձագետների կարծիքով, Ադրբեջանի տնտեսության գլխավոր խնդիրն է: Այն խաթարում է տնտեսական աճի կայունությունը և նվազեցնում դրա կանխատեսելիությունը՝ նեղացնելով ոչ նավթային բարձր տեխնոլոգիաների ոլորտներում միջազգային ներդրումների համար հարմարավետության գոտին: Մյուս կողմից, 2010-ականների վերջից Ադրբեջանում ածխաջրածինների արտադրության ծավալները անշեղորեն նվազում են՝ չնայած Ի. Ալիևի բազմիցս հայտարարություններին, որ երկիրը դեռ *«հարյուր տարվա պաշարներ» ունի:* Մինչդեռ հարցն այն չէ, թե Ադրբեջանը դեռ քանի տարի կկարողանա նավթն ու գազը հանել Կասպից ծովի ծանծաղուտից, այլ այն, որ փոխվում է համաշխարհային տնտեսության ողջ ճարտարապետությունը, որում առանձին երկրներում նավթն ու գազը կորցնում են իրենց առաջատար դերը նոր «երեք սյուների»՝ SS, վերականգնվող էներգիայի աղբյուրների և լոգիստիկայի պատճառով:

ԱդրՀ ղեկավարությունը չի կարող չհասկանալ, որ ինչ-որ բան պետք է անել տնտեսական դիվերսիֆիկացման հարցում, և դա պետք է անել շատ արագ: Բայց փաստն այն է, որ տասնամյակներ կպահանջվեն նավթագազային կախվածությունից ազատվելու համար: Ըստ էության, նավթարդյունահանող երկրները, որոնք կարողացան դիվերսիֆիկացնել իրենց տնտեսությունները, գնացին այս ճանապարհով արդեն 20-րդ դարի 90-ականներին: Այսինքն, երբ Բաքուն կնքեց իր *«Դարի պայմանագիրը»* (1994) և նոր էր մտնում հետխորհրդային «*ինքնիշխան նավթարդյունաբերության*» դարաշրջան: Այս անախրոնիզմն իրեն զգացնել է տալիս հիմա, քանի որ նավթային դարաշրջանի անկումը մտնում է իր վերջնական փուլը, իսկ նավթի ու գազի շուկան կորցնում է իր նախկին ազդեցության լծակները աշխարհատնտեսական և, հետևաբար, աշխարհաքաղաքական գործընթացների վրա:

Բաքվին արագացված դիվերսիֆիկացմանը ստիպող մյուս գործոնը ներքաղաքական իրավիճակն է: Մինչ ղարաբաղյան հիմնախնդրի «լուծումը», Ի. Ալիևի վարչակարգը սոցիալական անհավասարակշռությունն ու տնտեսական համակարգի խնդիրները հիմնավորում էր «*հայկական զավթողականությամբ*» և «*պատերազմական*» շրջանով, մինչդեռ այժմ, գոնե ֆորմալ առումով, նման փաստարկները կորցրել են իրենց արդիականությունը: Ադրբեջանական հասարակությունը, չնայած քաղաքական ընդդիմության ծայրահեղ թուլությանը, ավելի ու ավելի է դժգոհություն առաջ բերում՝ տնտեսության, սոցիալական ոլորտում և բնապահպանական իրավիճակից ելնելով: Եվ փոփոխությունների իր որոնումներում այն այլևս չի ընդունում բարեկեցության խնդիրները «հայկական հարցի» հետ կապելը: Այսօր Ի. Ալիևի ռեժիմը, ստեղծված իրավիճակից ելք փնտրելով, փորձում է ոչ թե փոխարինել, այլ փոխհատուցել երկրի նավթային կախվածությունը՝ մասնակցելով համաշխարհային լոգիստիկ և վերականգնվող էներգետիկայի նախագծերին: Այդ նպատակով Բաքուն ձեռնամուխ է

եղել չինական *«Մեկ գոտի, մեկ ճանապարհ»* մեգանախագծին ինտեգրվելու ուղուն՝ այս տարվա հուլիսին Պեկինի հետ ստորագրելով *«Ռազմավարական գործընկերության մասին հռչակագիրը»*[11]: Նույն տրամաբանությամբ, նկատի ունենալով Հյուսիս–Հարավ առանցքի երկայնքով մայրցամաքային լոգիստիկ նախագծերի լիարժեք ֆինանսատնտեսական շահառուի կարգավիճակը՝ ԱդրՀ-ն վերջին տարիներին խորացրել է հարաբերությունները ՌԴ-ի հետ՝ փաստացի դրանք հասցնելով դաշնակցային մակարդակի, ինչի մասին է վկայում «Մոսկվայի պայմանագրի» ստորագրումը 22.02.2022 թ.[12]:

Մյուս կողմից, Ի. Ալիևը փորձում է Ադրբեջանի համար ձեռք բերել Կենտրոնական Ասիան Եվրոպայի հետ կապող «*կանաչ էներգետիկայի*» հանգույցի կարգավիճակ, ինչպես նաև միջազգային հանրությանը համոզել հարավկովկասյան այս երկիրը վերականգնվող էներգիայի արտադրողի և սպառողի՝ էկոլոգիապես մաքուր արդյունաբերական և գյուղատնտեսական ոլորտներով և զբոսաշրջության բացառիկ հնարավորություններով դինամիկ կերպով վերածելու հեռանկարի մասին: Այս՝ մասամբ արդեն իրականացված և մասամբ դեռ հայտարարված ծրագրերը, Ադրբեջանի իշխանությունների համոզմամբ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում պետք է մեղմացնեն այս երկրի նավթային դարաշրջանի մայրամուտի հետևանքները: Միևնույն ժամանակ, Ի. Ալիևի վարչակարգը, ինչպես արդեն նշվեց, չի պատրաստվում և չի կարող իրեն թույլ տալ հրաժարվել մնացած ածխաջրածնային պաշարների հետագա հակաբնապահպանական շահագործումից, քանի որ երկրի տնտեսությունը և դրա ֆինանսավորման մեթոդները, ըստ էության, չեն թողնում ածխաջրածնային կախվածությունից ազատվելու հնարավորություններ: Ինչպես նախկինում, Բաքվի կողմից հայտարարված ծրագրերը ներառում են գազի արդյունահանման ծավալների ավելացում[13], ինչպես նաև նավթի նոր հանքավայրերի հետախուզման շարունակություն:

Այսպիսով, Բաքուն COP29 խորհրդաժողովի կազմակերպմանը մոտեցավ հակասական ակնկալիքներով և առավելապաշտական պահանջներով՝ փորձելով այս իրադարձությունը վերածել իր հավակնոտ խնդիրների լուծման ևս մեկ համապիտանի հարթակի: Ադրբեջանական «*բնապահպանական գործերի փաթեթը*» բազմաթիվ հարցեր է առաջացնում, և արդեն այժմ միջազգային լրատվամիջոցները ոչ լավագույն

---

[11] «Ադրբեջանն ու Չինաստանը հաստատել են ռազմավարական գործընկերություն» (ռուս.). Anadolu Ajansi (03.07.2024), https://t.ly/l7ONY. (բեռնման օրը՝ 15.11.2024):

[12] «Հռչակագիր Ռուսաստանի Դաշնության և Ադրբեջանի Հանրապետության միջև դաշնակցային փոխգործակցության մասին». Ռուսաստանի նախագահ (ռուս.)., (22.02.2022), http://kremlin.ru/supplement/5777\ (բեռնման օրը՝ 15.11.2024):

[13] «Ադրբեջանը մինչև 2030 թվականը կավելացնի գազի արդյունահանումը 51 տոկոսով (ռուս.), Daryo.uz (14.10.2024), https://daryo.uz/ru/2024/10/14/dobycha-gaza-v-azerbaydzhane-mozhet-prevzoyti-dobychu-nefti-prognoz-rystad-energy\ (բեռնման օրը՝ 15.11.2024):

ակնարկներ են պարունակում ինչպես այս միջոցառման կազմակերպչի, այնպես էլ՝ ընդհանուր առմամբ, համաժողովի ընթացքի մասին: Մինչև COP29-ի ավարտը վաղաժամ կլիներ ամփոփել դրա արդյունքները, սակայն միջազգային փորձագետներն ու հետազոտական կենտրոններն արդեն ասում են, որ համաժողովն ի սկզբանե «ձախողված էր»՝ մոլորակի բնապահպանական խնդիրներ տեսլականի և դրանց լուծումների վերաբերյալ համաշխարհային հիմնական դերակատարների միջև փոխհամաձայնության բացակայության պատճառով: Եվ, հետևաբար, տրամաբանական ենթադրություն է առաջանում, որ «*ձախողման» վայրը* պատահական չի ընտրվել: Հակառակ դեպքում, Բաքվին, որը հազիվ թե համընդհանուր թերահավատություն է առաջացնում, չէր վստահվի հաջող առաքելություն՝ կնքելու Երկրի կլիմայի և բնապահպանության ուղենշային համաձայնագիրը՝ տարեկան 1 տրիլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ: